Ազգային ուսումնական օլիմպիադա
Աշխարհագրություն
II փուլ
2023-2024 թթ.

➢ *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք № 1-5*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանի համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չեն ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **1. Ինչպե՞ս է կոչվում Արևմտյան կիսագնդում գտնվող սուպերհրաբուխը, որը համարվում է ամենաանկայուն հրաբուխներից մեկը նրա մեջ առկա մագմայի հսկայական ավազանի պատճառով:**



ա) Մաունա Լոա,

բ) Ակիտա-Կոմագատակե,

գ) Ելոուսթոուն,

դ) Երայվայոկյուդլ:

(1) 2. Ո՞ր քաղաքն է առաջինն ընդգրկվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

ա) Կիտոն,

բ) Ֆլորենցիան,

գ) Երուսաղեմը,

դ) Մարաքեշը:

(1) **3. Էքստրեմալ տուրիզմի ո՞ր տեսակն է պատկերված լուսանկարում:**



ա) ռաֆթինգը,
բ) զիփլայնը,
գ) դայվինգը,
դ) պարագլայդինգը:

(1) **4. Ո՞ր երկրում են արված հետևյալ լուսանկարները:**

ա) Նիդեռլանդներում,
բ) Շվեյցարիայում,
գ) Բելգիայում,
դ) Լյուքսեմբուրգում:

(1) 5. Ի՞նչ է պատկերված 2023 թվականի ապրիլի տվյալների հիման կազմված քարտեզի վրա:



ա) երկրների վերաբերմունքը Ռուսաստանի արտաքին քաղաքականության նկատմամբ,
բ) երկրների վերաբերմունքը ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության նկատմամբ,
գ) երկրների վերաբերմունքը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նկատմամբ,
դ) երկրների վերաբերմունքը Եվրոպական Միության ընդլայնման քաղաքականության նկատմամբ:

- ***Համապատասխանության որոշում - առաջադրանք № 6-8***

Հրահանգ
Որոշեք համապատասխանությունն առաջադրանքում տրված երկու թվարկացանկի միջև: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում՝ յուրաքանչյուր տառի տակ գրելով համապատասխան թվանշանը: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

(7) 6. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը *<u>հնարավոր չէ</u>* կրկնել).

	I թվարկացանկ		II թվարկացանկ
ա	Լիճ Մարակայբո	1	Բոլոր կղզիները պատկանում են Պորտուգալիային
բ	Լիճ Փարվանա	2	Անդրսառցադաշտային լիճ Անտարկտիդայում
գ	Մադեյրա կղզի և Ազորյան կղզիներ	3	Բոլոր կղզիները պատկանում են Կանարյան արշիպելագին
դ	Լիճ Վոստոկ	4	Լագունային ծագման լիճ
ե	Գոմերա կղզի, Ֆերո կղզի, Լանսարոտե կղզի	5	Հրաբխատեկտոնական ծագման լիճ
զ	Լիճ Ռիցա	6	Կարստային ծագման լիճ
զ	Լիճ Ռանչո Լա Բրեա	7	Բիտումի լիճ, որտեղ արդյունահանվում է բնական ասֆալտ
		8	Ժայռաբեկորների հոսքից առաջացած (ամբարտակային) լիճ

(6) 7. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը *հնարավոր չէ* կրկնել).

	Լողափի լուսանկար		Քաղաք/պետություն
ա	Կոպակաբանա	1	Նիցա
բ	Լազուր ափ 	2	Ռիո դե Ժանեյրո
գ	Արծաթյա լողափ	3	Վառնա

Ջ	Բոնդի լողափ	4	Կուբա
Յ	Ոսկե ավազներ	5	Պորտուգալիա
Ց	Բենաժիլ	6	Բիարից
		7	Սիդնեյ

(6) 8. Որոշե՛ք համապատասխանությունը (հաշվի առեք, որ պատասխանը *<u>հնարավոր չէ</u>* կրկնել).

	Ճանապարհորդ/հետախույզ		Ակնառու ձեռքբերումներ
ա		1	Էդմունդ Հիլարիի հետ առաջինն է հաղթահարել աշխարհի ամենաբարձր Ջոմոլունգմա գագաթը:
բ		2	Առաջինն է հասել Հարավային բևեռ:
գ		3	Դեյվիդ Ուոլշի հետ միասին «Տրիեստ» բաթիսկաֆով առաջինն է հասել ամենախոր՝ Մարիանյան իջվածքի հատակը:

Ջ		4	Առաջինն է, ով ոտք է դրել Լուսնի վրա:
Ց		5	Ճանապարհորդել է 234 երկրներում և անկախ տարածքներում:
Ց		6	Առաջինն էր, ով հաղթահարեց մոլորակի բոլոր (14) ութհազարանոց գագաթները և յոթ մայրցամաքների ամենաբարձր գագաթը, եղել է Հյուսիսային և Հարավային բևեռներում:
		7	Առաջինն է հասել Հյուսիսային բևեռ:

➢ *Տեղեկատվության վերլուծություն - առաջադրանք № 9-12*

Հրահանգ
Վերլուծեք առաջադրանքում տրված տեղեկությունը և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

(3) 9. Ո՞ր օվկիանոսի ազդեցության տակ է ձևավորվում կլիման Հարավային Ամերիկայի տարածքի մեծ մասում: Նշե՛ք այդ երևույթը պայմանավորող հիմնական աշխարհագրական գործոնը և բացատրե՛ք ձեր պատասխանը:



(3) 10. Քարտեզի վրա տրված է այսպես կոչված Նեմո կետը / անմատչելիության օվկիանոսային բևեռը, որը հաշվարկվել է 1992 թվականին:



(1) **10.1.** Որոշե՛ք Նեմո կետի աշխարհագրական կոորդինատները:

(1) **10.2.** Բացատրե՛ք, ինչի՞ց ելնելով է աչքի ընկել այս կետը Համաշխարհային օվկիանոսում:

(1) **10.3.** Ո՞ր մեթոդով են հաշվարկել Նեմո կետի աշխարհագրական կոորդինատները:

ա) ռադիոիզոտոպային,

բ) համակարգչային մոդելավորման,

գ) ինտերպոլյացիայի (միջարկման),

դ) վիճակագրական վերլուծության:

(2) 11. Զկնորսական սեյները 69°52' հսլ.լ. և 10°03' արլ.երկ. կոորդինատներում որսացել է 10 տոննա ատլանտյան սաղմոն: Ապրանքն իրացնելու նպատակով սեյները ուղղվել է դեպի նավահանգիստ, որը գտնվում է 38°42' հսլ.լ. և 9°08' արմ.երկ. կոորդինատներում:

(1) 11.1. Ո՞ր ծովում էր ձուկ որսում սեյները:

(1) 11.2. Ո՞ր նավահանգստում էր այն իրացնում ձուկը:

(8) 12. Վերլուծե՛ք տեղագրական քարտեզի հատվածը և պատասխանե՛ք հարցերին.



Մասշտաբ 1 : 10 000

Թփուտ

Ճորակ

Առանձին կանգնած փշատերև ծառ

Հորիզոնականները տարված են յուրաքանչյուր 2,5 մետրի վրա

Անտառ. – անտառապահի տուն

Խառը անտառ

Հողատարածք

(1) **12.1.** Ներկայացված ռելիեֆի պրոֆիլներից ո՞րն է համապատասխանում քարտեզի վրա նշված A և B կետերի միջև ընկած հատվածին:

ա) I
բ) II
գ) III
դ) IV



(1) **12.2.** Գետի ո՞ր ափին է գտնվում անտառապահի տունը:

(1) **12.3.** Հաշվե՛ք, թե քանի մետրի է հավասար առանձին կանգնած ծառի և անտառապահի տան միջև ընկած հեռավորությունը, եթե քարտեզի վրա համապատասխան հեռավորության երկարությունը կազմում է 3,5 սանտիմետր (անպայման ներկայացրե՛ք հաշվարկի գործընթացը):

(1) **12.4.** Հորիզոնի կողմերի օգնությամբ որոշե՛ք, թե 3-րդ հողատարածքից որ ուղղությամբ է գտնվում լայնատերև անտառը:

(1) **12.5.** Բացատրե՛ք, թե ինչու տեղագրական քարտեզի վրա ներկայացված երկու գետերի ափերն էլ պիտանի չեն/վտանգավոր են զանգվածային զբոսաշրջային-հանգստի լողափ կառուցելու համար:

(3) **12.6.** Դպրոցի լեռնադահուկային խմբակի աշակերտները ձմեռային ոլորասահքի (սլալոմ) համար ընտրում են մարզվելու համար բարենպաստ վայր: Որոշե՛ք, քարտեզի վրա թվանշաններով նշված (1, 2 կամ 3) տարածքներից ո՞րն է բոլորից շատ համապատասխանում մարզիկների պահանջներին: Ձեր ընտրությունը հիմնավորելու համար բերե՛ք երկու փաստարկ: